



ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դասագիրք հայկական
դպրոցների համար

2



Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 0 5

*Նեղինակ՝ Զուլիեդրա Գյուլամիրյան
Խմբագիր՝ Նովհաննես Զաքարյան*

Հրատարակչության տնօրեն՝	ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Հրատարակչության խմբագիր՝	ՄԱՇԱ ՄԼԱՑԱԿԱՆՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր՝	ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝	ԱՐԵՎԻԿ ԶԱԿՈՔՅԱՆԻ
Սրբագրիչներ՝	ՆՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ ՆԱՍԼՅԱՆ

Շապիկի 4-րդ էջին՝ հատված
Սիլվա Կապուտիկյանի
«Իմ հայ լեզու» բանաստեղծությունից

ՀՏԴ 373.167.1: 809.198.1 (075)
ԳՄԴ 81.2Հց72
Գ 673

Գյուլամիրյան Զ.
Գ 673 Մայրենի լեզու: –Եր.: Զանգակ–97, 2005.–96 էջ:

ISBN 99930-2-707-3

ԳՄԴ 81.2Հց72

© Գյուլամիրյան Զ.

Անունս _____ է:

Ազգանունս _____ է:

Հայրիկիս անունը _____ է:

Մայրիկիս անունը _____ է:

Բնակվում եմ _____ - ում:



ԱՀԱ ՄԵՍԻՐՈՊ ՄԱՀՏՈՑԻ ՍՏԵՂԾԱԾ ՏԱՌԵՐԸ

Ա ա	յ բ	ժ ժ	ժ է	ձ ձ	ձ է	Ռ ռ	ռ ա
Բ բ	բ են	Ի ի	ի ն ի	Մ մ	մ են	Ս ս	ս է
Գ գ	գ ի մ	Լ Լ	լ ու լ ն	Յ յ	հ ի	Վ վ	վ է վ
Դ դ	դ ա	Խ խ	խ է	Ն ն	ն ու	Տ տ	տ յ ու ն
Ե է	ե չ	Ծ ծ	ծ ա	Շ շ	շ ա	Ր ր	ր է
Զ զ	զ ա	Կ կ	կ են	Ո ո	վ ո	Ց ց	ց ո
Է է	է	Հ հ	հ ո	Չ չ	չ ա	Խ խ	վ յ ու ն
Ը ը	ը թ	Ձ ձ	ձ ա	Պ պ	պ է	Փ փ	փ յ ու լ ր
Թ թ	թ ո	Ղ ղ	ղ ա տ	Ջ յ	յ է	Ք ք	ք է





Առաջին դաս

ԲԱՐԵ՛Վ, ՓՈՔՐԻ՛Վ ԲԱՐԵԿԱՍ

Դու արդեն կարող ես կարդալ և գրել հայերեն: Հայերենը հայերի լեզուն է: Հայերենով դու կարող ես կարդալ հետաքրքիր հեքիաթներ, պատմվածքներ, հանելուկներ... Կարող ես իմանալ քո ժողովրդի պատմությունը:

Դու, անշուշտ, գիտես, որ հայերեն տառերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Դրանք մեր ժողովրդի գանձերն¹ են, նրա ամենամեծ հարստությունը:



1. Անգիր սաա հայոց այբուբենը:

2. Գրի՛ր հայոց այբուբենը (մեծատառերով և փոքրատառերով):



405 թվականին Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց 36 տառերից կազմված հրաշալի մի այբուբեն: Դրա շնորհիվ մեր ժողովուրդը մնաց հայ, իսկ երկիրը՝ Հայաստան:

Երևանի Մատենադարանի առջև դրված է Մեսրոպ Մաշտոցի արձանը: Այստեղից սկիզբ է առնում Մաշտոցի պողոտան²:

Իմ բառարանը

1. գանձ — մեծարժեք ունեցվածք, հարստություն
2. պողոտա — երկար, լայն և ուղիղ փողոց



ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

405 թվականն էր, պայծառ մի օր: Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում տոն էր: Ժողովուրդը դիմավորում էր Մեսրոպ Մաշտոցին և նրա աշակերտներին: Նրանք բերում էին հայոց տառերը: Այդ տառերով էլ սկսեցին կարդալ ու գրել սովորել հայ մանուկները: Դրանցով գրվեցին բազմաթիվ մատյաններ, հայերեն թարգմանվեցին շատ ու շատ գրքեր:



3. Նարցրոն՝ մայրիկիդ և հայրիկիդ, թե ինչ լեզվով են խոսել պապիկներդ ու պատիկներդ, որտեղ են սպրել նրանք:
4. Լրացրո՛ւ բաց թողած ձայնավորները և գրի՛ր սրբացված բառերը:

—յբ—բ—ն _____ հ—յ—ր—ն _____
պ—յծ—ռ _____ մ—տյ—ն _____
գ—րք _____ Ս—շտ—ց _____

ՀԻՇԻՐ



Հնչյուններն արտասանում ենք և լսում, իսկ տառերը գրում ենք և կարդում:



5. Անբողջացրո՛ւ նախադասությունները:

Իայերենի փառերը սրելծել է _____

Վեսրոպ Վաշտոցը սրելծել է _____

փառ:

Իայոց գրերի գյուպը փելի է ունեցել _____

թվականին:



ՓՈՔՐԻԿ ՄԵՍՐՈՂԸ

Ես ծիլն եմ կանաչ
Մեր նոր դպրոցի,
Ես թռչնիկն եմ ժիր¹
Մեսրոպ Մաշտոցի:

Մայրս է ինձ համար
Տառերը գրել
Եվ իմ անունը
Մեսրոպ է դրել:



Եվ ամոթ է շատ,
Որ կյանքի ճամփին
Իսկական թողը
Չքաշի² պապին:

Իմ բառարանը

1. **ժիր** — աշխույժ, կայտառ, եռանդուն
2. **քաշել** — այստեղ՝ նմանվել

6. Կարդա՛ր բառաշարքերը: Որոշի՛ր, թե որ տառերով են դրանք իրարից տարբերվում: Ընդգծի՛ր այդ տառերը:

մատ
տատ
պատ

սուր
ջուր
թուր

սար
սագ
սաթ

7. Որոշի՛ր անհայտ տառերը: Գրի՛ր ստացված բառերը:

